ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2024 թվականի N 713-Ա

«ՍՊՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 12-րդ հոդվածի 5-րդ մասը, 85-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հիմնադրել «Սպորտի կառավարման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ընկերություն):

2. Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 50 հազ. դրամ, որը համապատասխանում է 50 հատ հասարակ բաժնետոմսի, յուրաքանչյուրը՝ 1000 դրամ անվանական արժեքով:

3. Ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ լիազոր մարմին):

4. Լիազորել լիազոր մարմնին հիմնադրի անունից՝

1) հաստատել ընկերության կանոնադրությունը.

2) ստեղծել ընկերության խորհուրդ՝ կազմում ընդգրկելով լիազոր մարմնի (երկու), Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (մեկ),

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (մեկ) և մարզաշխարհի հանրաճանաչ (մեկ) ներկայացուցիչների.

3) սահմանված կարգով նշանակել գործադիր մարմնի ղեկավարին.

4) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել ընկերության պետական գրանցումը և իրականացնել ընկերության հիմնադրի և ընդհանուր ժողովի բոլոր իրավասությունները:

5. Ընկերության հիմնադրման հետ կապված «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորությունները վերապահել լիազոր մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ